Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

««ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-162-23.10.2017-ՏՀ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածից հանել <<ներմուծման փոխարինման>> բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը լրացնել <<Հայաստանի Հանրապետության կառավարության կամ մասնավոր նախաձեռնության հիման վրա >> բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

	հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան				
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 4-րդ հոդված	1-ին մասի 2-րդ կետը լրացնել <<ինչպես նաև սույն օրենքով նախատեսված այլ գործառույթներ>> բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ	Նախագծի 4-րդ հոդված	1-ին մասի 6-րդ կետում <<մշտապես գործող հանձնաժողով>> բառերը հանել և լրացնել <<խորհրդակցական միավոր>> բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

	Խոսրով Հարությունյան				
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 4-րդ հոդված	1-ին մասի 7-րդ կետը լրացնել <<լիազոր մարմնի որոշմամբ>> բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 4-րդ հոդված	1-ին մասը լրացնել նոր 12-րդ կետով հետևյալ նոր խմբագրությամբ. <<ազատ տնտեսական գոտու լուծարում՝ սույն օրենքով սահմանված կարգով ազատ տնտեսական գոտու գործունեության դադարեցում>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:

7.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 5-րդ հոդված	2-րդ մասի 1-ին կետը լրացնել <<անհրաժեշտությունը և տեղակայման հիմնավորվածությունը>> բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 5-րդ հոդված	2-րդ մասը լրացնել նոր 10-րդ կետով՝ << շահագործողների ներառման կարգը շահագործողների ռեեստրում>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածի 3-րդ մասից հետո լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ խմբագրությամբ. <<Կազմակերպչի ընտրության չափանիշներն են.	Ընդունվել է:	Ընդունվել է:

	մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան		1) կազմակերպչի ներդրումների չափը, ձևերը, ուղղվածությունը և ժամկետները. 2) կազմակերպչի կողմից ստեղծվելիք աշխատատեղերի քանակը. 3) կազմակերպչի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը և սակագները. 4)ազատ տնտեսական գոտու միջազգային ճանաչման և բրենդի տարածմանն ուղղված միջոցառումները, այդ թվում՝ մարքեթինգային պայմանագրերի առկայություն, ազատ տնտեսական գոտի շահագործողների, այդ թվում՝ միջազգային բրենդների ներգրավում, ազատ տնտեսական գոտում արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների արտահանման աջակցմանն ուղղված աշխատանքներ և		

			ակնկալվող արդյունքներ. 5) ակնկալվող պետական աջակցության ձևերը. 6) ազատ տնտեսական գոտու ստեղծման անհրաժեշտության և դրա տեղակայման վայրի ընտրության հիմնավորվածությունը (միայն մասնավոր նախաձեռնության դեպքում):>>:		
10.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածի 4-րդ մասը դարձնել 5-րդ մաս	Ընդունվել է:	Ընդունվել է:
11.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածի 5-րդ մասը դարձնել 6-րդ մաս և լրացնել << կնքման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում	Ընդունվել է:	Ընդունվել է:

	տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան		>> բառերով:		
12.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը միավորել՝ դարձնելով նոր 7-րդ մաս՝ հետևյալ խմբագրությամբ. <<Ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին կառավարության որոշմամբ սահմանված ազատ տնտեսական գոտու գործարկման վերջնաժամկետը խախտելու դեպքում Հանձնաժողովի եզրակացության հիման վրա կառավարությունը ընդունում է ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին կառավարության որոշմամբ սահմանված վերջնաժամկետները փոփոխելու կամ ազատ տնտեսական գոտու	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ստեղծման մասին կառավարության որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:>>:		
13.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 7-րդ հոդված	Հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. <<Հոդված 7. Ազատ տնտեսական գոտու շահագործումը 1. Ազատ տնտեսական գոտու շահագործումն իրականացվում է տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառված շահագործողների կողմից: 2. Շահագործողների ռեեստրում ներառվում են այն հայտատուները, որոնք գործարար ծրագրի վերաբերյալ ստացել են կառավարության կողմից տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու հավանություն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա և տվյալ ազատ տնտեսական գոտու Կազմակերպչի հետ կնքել են պայմանագիր: 3. Հանձնաժողովի եզրակացությունը կազմվում է սույն օրենքի հոդված 5-ի 2-րդ մասի 10-րդ կետով սահմանված կարգին համապատասխան: 4. Շահագործողների ռեեստրում ներառված շահագործողները ստանում են վկայական, որի ձևը սահմանվում է Լիազոր մարմնի կողմից: 5. Հայտատուի՝ տվյալ ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու վկայականի տրամադրման, երկարաձգման և դադարեցման կարգը սահմանում է կառավարությունը:		

			6. Շահագործողի գործարար ծրագիրը պարտադիր ներառում է սկզբնական հայտարարագիր: 7. Լիազոր մարմինը հետևում է գործարար ծրագրի կատարմանը՝ սկզբնական և հերթական հայտարարագրերի վերլուծության միջոցով: 8. Հերթական հայտարարագիրը շահագործողի կողմից ներկայացվում է Լիազոր մարմին տարեկան կտրվածքով վկայականի գործողության ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր օրացուցային տարին լրանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: 9. Շահագործողների ռեեստրից շահագործողը հանվում է հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում. 1) իրավունքի ուժով՝		

			ա. կազմակերպչի և շահագործողի միջև պայմանագրի լուծման դեպքում. բ. սույն օրենքով սահմանված հիմքերով ազատ տնտեսական գոտու լուծարման դեպքում. գ. վկայականով սահմանված ժամկետը լրանալու դեպքում, եթե շահագործողի կողմից ժամկետը երկարաձգելու դիմում չի ներկայացվում. 2) կառավարության որոշմամբ՝ հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ լիազոր մարմնի ներկայացմամբ՝ ա. հերթական հայտարարագրում կեղծ կամ ոչ ճշգրիտ կամ աղավաղված տվյալներ ներկայացնելու, դրանք լիազոր մարմնի կողմից հայտնաբերվելու և շահագործողին դրա վերաբերյալ ծանուցելու օրվանից 10-օրյա		

			ժամկետում շահագործողի կողմից ճշգրիտ հայտարարագիրը լիազոր մարմին չներկայացնելու դեպքում. բ. տվյալ ժամանակաշրջանի համար հերթական հայտարարագրերի թվային ցուցանիշների հանրագումարի սկզբնական հայտարարագրի թվային ցուցանիշներից առնվազն 20% բացասական շեղման դեպքում: Շահագործողը հանվում է շահագործողների ռեեստրից՝ լիազոր մարմնին հերթական հայտարարագրի ներկայացումից հետո 3-ամսյա ժամկետում շահագործողի կողմից շեղումը չվերացնելու և շեղումը վերացնելու մասին տեղեկատվություն չներկայացնելու դեպքերում. 10. Շահագործողների ռեեստրից հանվելու դեպքում կազմակերպչի և շահագործողի միջև կնքված		

			պայմանագիրը համարվում է լուծված: «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունը ավարտվում է «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 207-րդ հոդվածով սահմանված դեպքերում և ժամկետում: 11. Ազատ տնտեսական գոտում կարող են գործունեություն իրականացնել շահագործողները, ինչպես նաև շահագործող չհանդիսացող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: Ազատ տնտեսական գոտում ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին կառավարության որոշմամբ սահմանված գործունեության տեսակներից տարբերվող		

			գործունեության տեսակներ, այդ թվում մանրածախ առևտուր, կարող են իրականացնել շահագործող չհանդիսացող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը: Ազատ տնտեսական գոտում ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին կառավարության որոշմամբ սահմանված գործունեության տեսակներ կարող են իրականացնել նաև շահագործող չհանդիսացող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ առանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շահագործողների համար նախատեսված արտոնությունների կիրառման: 12. Ազատ տնտեսական գոտու տարածքում արգելվում է ազատ տնտեսական գոտու շահագործողների և շահագործող		

			չհանդիսացող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի միջև այնպիսի գործարքների իրականացում, որոնց շրջանակներում իրականացվում է ապրանքների հանձնում շահագործողից շահագործող չհանդիսացող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը:>>:		
14.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 9-րդ հոդված	9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերից հանել <<հանձնաժողովի նախագահի միջոցով>> բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
15.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ	Նախագծի 9-րդ հոդված	9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին մասի վերջում ավելացնել <<կառավարության կարգով	Ընդունվել է:	Ընդունվել է:

	տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան		սահմանած ժամկետում.>> բառերը:		
16.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	Նախագծի 16-րդ հոդված	Հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. <<<Հոդված 16. Ազատ տնտեսական գոտու լուծարումը 1. Ազատ տնտեսական գոտին լուծարվում է կառավարության որոշմամբ՝ 1) սահմանված ժամկետի լրանալուց, եթե կառավարության կողմից ժամկետը երկարաձգելու մասին որոշում չի կայացվում կազմակերպչի՝ սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված հայտի հիմքով հանձնաժողովի կողմից տրված եզրակացության հիման վրա	Ընդունվել է:	Ընդունվել է:

			2) վաղաժամկետ՝ ա. ազատ տնտեսական գոտու գործարկումից հետո մեկ տարվա ընթացքում շահագործող չլինելու դեպքում. բ. լիազոր մարմնի և կազմակերպչի միջև կնքված պայմանագրի լուծման դեպքում. գ. կազմակերպչի հիմնավորված առաջարկությամբ՝ հանձնաժողովի եզրակացության հիման վրա: 3) Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) և գ) ենթակետերով սահմանված դեպքերում կազմակերպիչը նախապես փոխհատուցում է լուծարման հետևանքով շահագործողների կողմից կրած վնասները:>>:		
17.	ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ տնտեսական	Նախագծի 19-րդ հոդված	19-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <<Սույն օրենքի 4-րդ հոդված 1-ին մասի 6-րդ կետով,	Ընդունվել է:	Ընդունվել է:

	հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան		7-րդ հոդվածի 5-րդ մասով, 9-րդ հոդվածի 1-ին մասով, 13-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով սահմանված կարգավորումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 90 օրացուցային օրվա ընթացքում>>:		